



ՀՀ ԳԱԱ ՀԱՅՏԱՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽՈՒՄ ԻՐԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Ադրբեջանի մշակույթի նախարարի՝ 2022 թ. փետրվարի 3-ի պաշտոնական հայտարարությունից միանշանակ պարզ է դառնում, որ Ադրբեջանը, շարունակելով իր հայատյաց քաղաքականությունը, հստակ ծրագրված գործողություններով հետևողականորեն իրականացնում է Արցախի հայաթափման, հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, օտարման քաղաքականություն՝ այս անգամ արդեն բացահայտ սպառնալով վերացնել ու ջնջել Արցախի հայ-

կական եկեղեցիների ու այլ սրբավայրերի արձանագրությունները: Հայտարարությունից բխում է, որ ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ՝ բաղկացած աղվանական պատմության, մշակույթի և ճարտարապետության մասնագետներից, ինչպես նաև պետական կառույցների ներկայացուցիչներից, ովքեր «ուսումնասիրությունից» հետո պետք է հեռացնեն Արցախում (Ղարաբաղում) «աղվանական կրոնական/քրիստոնեական» կառույցների վրա «հայերի կողմից գրված, ավելացված կեղծ գրությունները, արձանագրություններն ու հետքերը» (<https://report.az/en/cultural-policy/working-group-set-up-to-restore-armenianized-temples-of-ancient-albania/>): Արցախի տարածքի քրիստոնեական հուշարձանները և դրանց վրա եղած գրությունները մեկ դարից ավելի է, ինչ մասնագետների կողմից ուսումնասիրվում են, և դրանց իսկությունը կամ ազգային պատկանելությունը երբևիցե խնդրահարույց չի եղել (չհաշված պատմական իրողությունները կեղծելու դիվերտանտական փորձերն ու հայտարարությունները):

Արցախի տարածքում գտնվող հայ միջնադարյան ճարտարապետության արժեքավոր քրիստոնեական հուշարձանախմբեր Ամարասի վանքը, Դադիվանքը, Խաթրավանքը, Գանձասարի վանքը, Գոչավանքը, բազմաթիվ եկեղեցիներ,

այդ թվում՝ Շուշիի նշանավոր Ղազանչեցոց տաճարը, հայկական ճարտարապետության առանցքային օրգանական մասն են:

Արցախի՝ զարգացած միջնադարի մոնումենտալ կառույցները՝ եկեղեցիները, գավիթները, զանգակատները, իրենց ստեղծագործական կառուցվածքով (կոմպոզիցիայով) և դեկորով սերտորեն առնչվում են պատմական Սյունիքի և Այրարատի նախորդող ժամանակաշրջանի նույնատիպ կառույցներին, ինչը հետազոտություններով փաստել են հայկական միջնադարյան ճարտարապետությունն ուսումնասիրող արտասահմանյան հեղինակավոր գիտնականները ևս, այդ թվում՝ Ժան Միշել Թիերին (Ֆրանսիա), Պաուլ Կուլենտ (Իտալիա) և այլք:

Վիճաբար արձանագրությունների և այդ արձանագրություններով մեր օրերը հասած տվյալների գիտական վերլուծությամբ ժխտվում է դրանց «աղվանական» լինելու հանգամանքը, ուստի որպես արցախահայության մշակութային ժառանգության «աղվանականացման» լավագույն տարբերակ, ընտրվել է վիճաբար տվյալների իսպառ ոչնչացումը, ինչպես ցույց է տալիս Նախիջևանի տարածքի հայկական մշակութային ժառանգության ոչնչացման կամ աղավաղման «ադրբեջանական փորձը»: Ադրբեջանում >2

ԸՇ ԳԱԱ-ում ԸՇ Ազգային Ժողովի պատվիրակության հետ քննարկվեցին գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացման հեռանկարները

Ս.թ. փետրվարի 21-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը ընդունեց ՀՀ Ազգային ժողովի պատվիրակությանը՝ ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ, ԱԺ նախագահի լիազորությունները կատարող Հակոբ Արշակյանի գլխավորությամբ:

Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Հրանտ Սաթևոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը, ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանը, ՀՀ ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարները, ինստիտուտների տնօրենները, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը, պատգամավորներ Վիգեն Խաչատրյանը, Խաչատուր Սուքիասյանը, Ալխաս Ղազարյանը, Ալեքսեյ Սանդիկովը:

Քննարկվեցին Հայաստանում գիտության և գիտատեխնոլոգիական ոլորտի հեռանկարային զարգացման հարցերը:

«Այսօր Գիտությունների ազգային ակադեմիան բարեփոխումների շեմին է: Բարեփոխումներն իրականացվում են Գիտության կոմիտեի հետ համաձայնեցված և Գիտության ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրին համահունչ: Բարեփոխումներն ասելով նկատի ունենք գիտաարտադրական, գիտատեխնոլոգիական և գիտահետազոտական ոլորտների կառավարման ճիշտ շեշտադրումը, գերազանցության կենտրոնների ստեղծումը, դրանց հենքի վրա հետազոտական ցանցերի ստեղծումը, կրթական, արդյունաբերական բաղադրիչների ներառում և այդ ա-



մենի հիման վրա կրթություն-գիտություն-արդյունաբերություն կապի ապահովումը, ինչը լուրջ գործոն է գիտության, տեխնոլոգիաների, տնտեսության զարգացման, գիտահեն տնտեսության ստեղծման գործում», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը:

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ, ԱԺ նախագահի լիազորությունները կատարող Հակոբ Արշակյանը իր խոսքում նշեց. «Մենք գտնվում ենք մի շենքում, որտեղ աշխատել են Մերգելյանի, Ալիխանյանների, Համբարձումյանի նման համաշխարհային մասշտաբի գիտնականներ, և համոզված են, որ այսօր էլ մեր գիտնականների մեջ կան նմանօրինակ պրոֆեսորներ, ովքեր իրենց ավանդն են ներդնում գիտության զարգացման գործում»:

Հակոբ Արշակյանը շեշտեց՝ գիտատեխնոլոգիական ոլորտի զարգացումը քաղաքական իշխանության նպատակն է: «Բացի ռազմավարական երկարաժամկետ ծրագրերից, ինչպիսին են «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050»-ը, կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը, բյուջետային պլանա-

վորման համակարգը, ռազմավարական տեսանկյունից կարիք կա պետական երկարաժամկետ պլանավորման, ինչը պետք է իրականացվի Գիտությունների ազգային ակադեմիայի, կառավարության համապատասխան գերատեսչությունների և մասնավոր ընկերությունների ներգրավվածությամբ: Հայաստանում գիտակրթական ոլորտում ներդրումներն ամենաարդյունավետն են, և այս տեսանկյունից երկու կարծիք լինել չի կարող»:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանը նշեց, որ պետք է լինի սերտ համագործակցություն Ազգային Ժողովի, Գիտությունների ազգային ակադեմիայի, Գիտության կոմիտեի և նախարարությունների միջև: «Պետության կողմից ընդունված կարգախոսը, ըստ իս, պետք է լինի մեկ նախադասությամբ. գիտատեխնոլոգիական արդիականացումը պետք է հանդիսանա ազգային զարգացման դրոշմը: Այդ դրոշմինը պետք է մշակել և ընդունել ամենալուրջ մակարդակով», - ասաց Արթուր Իշխանյանը:

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանը ասաց. «Գիտության ո-

լորտում մի շարք փոփոխություններ են իրականացվել: Ամենակարևորը գործընկերային հարաբերությունների ստեղծումն է համակարգի բոլոր կազմակերպությունների և դերակատարների միջև: Կառավարությունն ընդունել և համձն է առել գիտության ոլորտի հետ Հայաստանի ապագան կապելու առաքելությունը, ընդունել է գիտատեխնոլոգիական զարգացման ճանապարհը: Այդ ուղղությամբ առաջին քայլն արվել է՝ գիտության ոլորտի ֆինանսավորման ավելացում մոտ 85 տոկոսով: Քայլեր են արվում Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի բարեփոխումներին, օպտիմալացման ուղղությամբ: Այսօր Գիտությունների ազգային ակադեմիայի հետ ունենք անմիջապես համագործակցություն, բոլոր հարցերը քննարկվում են բաց ու համագիտ մթնոլորտում: Աշխատանքը տալիս է իր արդյունքները»:

Հանդիպման ժամանակ մասնավորապես քննարկվեցին խնդիրներ՝ կապված «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների հետ: Ըստ Արթուր Իշխանյանի՝ անհրաժեշտ է օրենքում կատարել համապատասխան խմբագրում, որը հնարավորություն կտա գիտական կազմակերպություններին ժամանակին կատարելու գնումները:

Եզրափակելով հանդիպումը՝ Հակոբ Արշակյանը նշեց, որ նմանօրինակ հանդիպումները պետք է լինեն շարունակական. «Ազգային ժողով, կառավարություն, գիտական ինստիտուտներ համագործակցությունը զարգանալու մեծ հեռանկար ունի: Այս հանդիպումը համարենք առաջին քայլն ու շարժվենք առաջ»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

➤1 չկան քրիստոնեական մշակույթի ու հուշարձանների ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետներ, ինչի վկայություններն են իրենց իսկ հրապարակումները, որոնք սահմանափակվել են իսլամական ճարտարապետության ներկայացումով:

Նախ, եթե անգամ պայմանականորեն ընդունենք, որ դրանք հետագայի հավելում են, ապա, ըստ հուշարձանների պահպանության ընդունված չափորոշիչների, այդ դեպքում ևս դրանց վերացումը մշակութային վանդալիզմ է, քանի որ հաջորդող դարերում արված ավելացումները տվյալ ճարտարապետական հուշարձանի պատմության անբաժանելի մասն են:

Կասկածից վեր է, որ վերոհիշյալ հանձնաժողովը ստեղծվել է հայկական մշակութային ցեղասպանության ծրագիրը կյանքի կոչելու, արցախահայության մշակութային ժառանգությունն իր իսկության և ինքնության իրական տիրոջից օտարելու, տարածաշրջանի պատմությունը համալիր խեղաթյուրելու նպատակով:

Այս հայտարարությամբ Ադրբեջանն ի լուր աշխարհի մեկ անգամ ևս հռչակում է, որ ամերկյա խախտում է «Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրով» ամրագրված մտքի, խղճի, դավանանքի ազատությունը և այդ ազատության հետևանքով ստեղծված ժառանգությունն իր ուզած ձևով արժևորելու իրավունքը:

Արցախի հուշարձանների՝ աղվանական լինելու տեսության նպատակն է փորձել իբրև թե պատմականորեն հիմնավորել Արցախի հանդեպ Ադրբեջանի հավակնությունները և, գիտությունը ծառայեցնելով իրենց ցեղասպանական նկրտումներին, նախ՝ հիմնավորել Արցախի Չանրապետության այժմ բռնազավթված տարածքներում հայկական ներկայության ոչնչացումը, ապա նաև՝ «պատմամշակութային» կեղծ նախադրյալներ ստեղծել այժմ ռուս խաղաղապահների կողմից վերահսկվող տարածքից ներս սողոսկելու համար:

Արցախի հուշարձանների վիմագրագիտական համակողմանի ուսումնասիրությունը, որը ներառում է այդ արձանագրությունների հնագրագիտական, լեզվաբանական, արվեստաբանական, աստվածաբանական, գրական-աղբյուրագիտական և հատկապես պատմագիտական քննությունը, միանշանակ ապացուցում է այդ եկեղեցիների և դրանց արձանագրությունների և այլ ռեկվիզիտների հայկականությունը:


Չանաշխարհային փորձից հայտնի է, որ ոչ միայն վիմական արձանագրությունների, այլև գրական տարբեր հորինվածքների և կեղծիքների դեպքում իսկույն երևում է, որ դրանք կատարվել են հետագայում: Արցախի հուշարձաններում հնարավոր չէ գտնել վաղ թվագրված և արհեստական զրաբարով հորինված որևէ արձանագրություն:

Ավելին, լեզվական առումով ինչպես վիմագրերի, այնպես և ձեռագրերի դեպքում ընդհանուր օրինաչափություն է, որ տեղի գրավոր խոսքում արտահայտվում են գրչության միջավայրի լեզվական իրողությունները՝ բարբառները: Արցախի վիմական արձանագրություններում նկատելի են արցախյան բարբառի տարրերը, մինչդեռ ամհնար է գտնել ենթադրյալ աղվանեցիների որևէ հետք: Ասվածը ևս մեկ անգամ վկայում է, որ մշակութային այս ժառանգությունը կերտել է Արցախի հայությունը՝ ճարտարապետական կոթողների որմներին դրոշմելով բարբառի տեղային իր շունչը: Էլ չենք խոսում Արցախի գրչության կենտրոններից մեզ հասած նարյուրավոր ձեռագիր մատյանների գոյության մասին, որոնց հիշատակարանների բովանդակությունն ինքնին լրացնում ու վերահաստատում է վիմագրերում վկայված սկզբնաղբյուրային տեղեկությունները:

Թե՛ ձեռագրերում և թե՛ ճարտարապետական հուշարձաններում հետագայում կատարվող հավելումները կառուցվածքային առումով սովորաբար դրվում են ոչ ճիշտ տեղում, քանի որ ճարտարապետական ընդհանուր հորինվածքում կառուցումից անմիջապես հետո, որպես կանոն, փորագրվում են տվյալ հուշարձանի կառուցման հետ կապված արձանագրությունները: Եկեղեցու ընդհանուր կառուցվածքային ստեղծագործական կառուցվածքի և խորհրդաբանության տեսանկյունից կարող ենք փաստել, որ արցախյան բոլոր մշամավոր կոթողների վիմական արձանագրությունները գտնվում են ճիշտ այն տեղում, որտեղ եկեղեցիների կառուցման մասին վկայող արձանագրությունները պետք է փորագրվեին այդ կոթողների կառուցումից անմիջապես հետո:

Պատմագիտական քննությամբ ևս հնարավոր չէ ցույց տալ Արցախի հուշարձանների նվիրատվական կամ կառուցման մասին պատմական տեղեկություններ պարունակող՝ հետագայում ստեղծված, սակայն ավելի վաղ շրջանի վերագրվող որևէ արձանագրություն:

Հուշարձաններում առհասարակ ընդունված երևույթ է պատմության տարբեր շրջափուլերում տեղի ունեցած ուշագրավ իրադարձությունների արձանագրումը: Արցախյան հուշարձաններն այս առումով ևս բացառություն չեն, ուստի հետագա նորոգումների, նոր շինություններով համալրումների, նվիրատվությունների և այլ հիշարժան գործերի դեպքում կարևորվել է վիմագիր կազմելու ավանդույթը: Արցախի եկեղեցիների մասն արձանագրությունները ևս վերաբերում են բացառապես հայկական միջավայրին և իրողություններին, ինչը ևս հաստատում է, որ այդ հուշարձաններն իրենց կառուցման օրից մինչև Ադրբեջանի վանդալիզ-



մի այսօրվա դրսևորումները ոչ միայն հայ արվեստի մասն են, այլև դրանց հետագա պատմությունը ևս կապվել է այդ արժեքները ստեղծող հայ ժողովրդի հետ: Դա կրկնակի հաստատվում է նաև կոթողային հուշարձանների՝ հազարավոր խաչքարերի ու տապանաքարերի օրինակով, որոնց հայերեն՝ մետրոպատառ վիմագրերը ևս հայկական միջավայրի գոյության ուղղակի արտացոլանքն են:

Եթե անգամ Արցախի Չանրապետության այժմյան օկուպացված տարածքում մշակութային վանդալիզմի իրականացման փորձ արվի, ապա միևնույն է, այդ հուշարձանների իրական լուսանկարները, չափագրությունները և արձանագրություններն իրենց վերծանություններով, ռուսերենով ու եվրոպական տարբեր լեզուներով արված թարգմանություններով շարունակելու են մնալ որպես Ադրբեջանի դեմ ուղղված մշակութային ցեղասպանության մեղադրանք՝ ցույց տալով, թե իրականում ինչպիսին են եղել այդ հուշարձանները նախքան Ադրբեջանի պետականորեն իրականացված ոչնչացումը:

Փաստորեն հայկական մշակութային ժառանգության ոչնչացման, օտարման քաղաքականությունը միջազգային հանրությանը ներկայացվում է որպես աղվանական ժողովրդի կրոնական իրավունքի վերականգնման քայլ՝ այդ նպատակի համար օգտագործելով Ադրբեջանում քաղաքական պատանդի կարգավիճակով գոյատևող ուղի ժողովրդի ներկայացուցիչներին: Այժմ ամեն գնով փորձ է արվում կյանքի կոչել նորահնար «Ուղիական» եկեղեցու նախագիծը: Այն դարձել է հայամերձ ազգային նպատակի, պատմության կեղծման կարևոր գործիք: Ադրբեջանական իշխանություններն առիթը բաց չեն թողնում հայտարարելու, որ իբրև «Աղվանից» եկեղեցու իրավահաջորդ «Ուղիական» եկեղեցին իրավունք ունի տնօրինելու Արցախում, պատմական Ուտիքում, անգամ ներկայիս Թուրքիայի տարածքում գտնվող և ադրբեջանական աճապար պատմաբանների կողմից աղվանական հռչակված եկեղեցիները:

Պատմական բազմաթիվ սկզբնաղբյուրների վկայություններից բաց հայտնի է, որ Աղվանից եկեղեցին պատմության ողջ ընթացքում սերտորեն կապված է եղել Հայոց եկեղեցու հետ: Առաքելական քարոզչության ավանդական շրջանից երեք դար հետո այն պաշտոնապես հաստատվել է Գրիգոր Լուսավորչի և նրա թոռան՝ Գրիգորիսի կողմից 4-րդ դարի սկզբներին և հետագա պատմության ողջ ընթացքում «ի հոգևորս» Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգի մաս է կազմել:

Աղվանից եկեղեցու իրավագրությունը սկզբնապես տարածվում էր Բուև Աղվանից թագավորության տարածքի վրա, որն ընդգրկում էր Կուր գետի ձախափնյակը՝ մինչև Կասպից ծով, Կովկասյան լեռնաշղթա և Դերբենդի լեռնանցք (եպիսկոպոսանիստ այդ ժամանակ գտնվում էր թագավորության մայրաքաղաք Կապադակում): Սակայն երբ 428 թ. Սասանյան Իրանի արքայից արքան վերացրեց Հայոց Արշակունյաց թագավորությունը և Այսրկովկասում ստեղծեց երեք մարզպանությունների վարչական համակարգ, ընդ որում՝ Հայաստանի արևելյան և հյուսիսային նահանգները (Ուտիքն ու Արցախը՝ Աղվանք-Առանին, իսկ Գուգարքը՝ Վիրք-Վարջանին) մտցնելով հարևան մարզպանությունների կազմի մեջ, Աղվանից եկեղեցու իրավագրությունն անցավ (միջնադարի եկեղեցավարչական բաժանման սկզբունքների համաձայն) նաև Կուրի աջափնյակում գտնվող հայկական Ուտիք և Արցախ նահանգների վրա: Մարզպանության կենտրոնը 462 թ. Կապադակից Չող-Դերբենդ քաղաք տեղափոխվելուց հետո այնտեղ հաստատվեց նաև Աղվանից եկեղեցու (որն արդեն արքայիսկոպոսության-կաթողիկոսության կարգավիճակ էր ստացել) նստոցը: Սակայն շուտով՝ 6-րդ դարի առաջին տասնամյակներին, Աղվանից կաթողիկոսության կենտրոնը տեղափոխվեց Կուր գետի հայկական աջափնյակ՝ նորակառույց մարզպանանիստ Պարտավ քաղաք (Ուտիք նահանգի Ուտի-Առանձնակ գավառում):

16-րդ դարի սկզբում Աղվանից եկեղեցու նստավայրը վերջնականապես հաստատվում է Գանձասարում՝ Արցախի

կենտրոնում (նախորդ դարում նրան զուգահեռ կաթողիկոսանիստ էր նաև ճալեթը՝ Կուրի ձախափնյակում): Դրանից հետո այն հանդես է գալիս նաև Գանձասարի կաթողիկոսություն անվամբ՝ իբրև Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու թեմերից մեկը, որը 19-րդ դարում Ռուսաստանի ցարական իշխանությունների իրավական ակտերով վերածվեց Էքմիածնի կաթողիկոսության միտրոպոլիտության (արքեպիսկոպոսության):

Չարմանալի է, որ Ադրբեջանի՝ կովկասյան ալբանացիներին վերաբերող հռետորաբանությունում կենտրոնական տեղ է հատկացվում ուղիներին՝ մի ժողովրդի, որը վերջին 200 տարվա ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական ծանրագույն հետապնդումների: 18-19-րդ դարերում ուղիներին բռնի իսլամացման և ծուլման քաղաքական գործընթացը հանգեցրեց Աղվանքի ժառանգության այդ ամենաակներև ներկայացուցիչների գրեթե իսպառ ոչնչացման: Այդուհանդերձ, Նուխի գավառի, մասնավորապես Շեքիի, Օղուզի (ճախկին Վարդաշենի) և Գաբալայի (ճախկին Կուտկաշենի) շրջանների առնվազն 43 ուղիական գյուղերի բնակչությունը պահպանել էր ուղիական (աղվանական) ինքնությունը և, չնայած լեզվական թյուրբացմանը և իսլամացմանը, շարունակում էր հարգել աղվանական պատմական հուշարձանները և սրբավայրերը, տոնել աղվանական տոները, տապանագրերում նշել իրենց ազգային ինքնությունը և այլն: Հնարավոր է, հենց այդ պատճառով ուղիները 1918-1920 թվականների եթնիկական բախումների ժամանակ թյուրքալեզու ադրբեջանցիների կողմից ենթարկվել են դաժան ֆիզիկական բռնության, ոչնչացման և արտաքսման: Վերջին ուղիական բնակավայրերի՝ Վարդաշենի, Միրզաբեյլուի, Սուլթան Նուխիի, Ջոռուզլուի բնակչությունը և Նիժ գյուղի բնակիչների մեծ մասը, փախչելով հետապնդումներից, ստիպված եղան վերջնականապես լքել հայրենիքը, որտեղ իրենց նախնիներն ապրել էին հարյուրամյակներ շարունակ: Ուղիների արտաքսումից հետո Ադրբեջանում «վերականգնվում է պատմական ճշմարտությունը»։ Աղվանքի ողջ նյութամշակութային ժառանգությունը ճշգրտվում կամ ոչնչացվում է:

Հայկական մշակութային ժառանգության ժխտողական քաղաքականությունը կյանքի կոչելու նպատակով Ադրբեջանի իշխանություններն օգտագործում են այսօր Ադրբեջանում մնացած մոտ 2-3 հազար ուղիներին: Չուր չէ, որ Ադրբեջանը չի ստորագրում Տարածաշրջանային լեզուների կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան (անգլ. European Charter for Regional or Minority Languages, ֆր. Charte européenne des langues regionales ou minoritaires)՝ լեզուների պաշտպանության և սատարման եվրոպական կոնվենցիան, որից օգտվում են ավանդական փոքրամասնությունները:

Այսպիսով.

- հատկապես կարևորելով «Իսկության վերաբերյալ Նարայի փաստաթուղթը», ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է, որ մշակութային արժեքների՝ հավանաբարություններում հայտնվելու դեպքում պահանջվում է մշակութային արժեքների հանդեպ լեզվափոխության, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության հիմնարար սկզբունքների ճանաչում, համաձայն որոնց՝ մշակութային ժառանգության պահպանության և կառավարման պատասխանատվությունը վերապահված է այն համայնքին, որը ստեղծել է մշակութային ժառանգությունը, և մշակութային ժառանգության իսկության փաստը ոչ մի դեպքում չպետք է ստորադասվի (Իսկության վերաբերյալ Նարայի փաստաթուղթ, 8-րդ կետ):

- ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան գտնում է, որ ինչպես նշված է «Ձինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թվականի Հասագյի կոնվենցիայի նախաբանում և վերահաստատված ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ 2016 թվականի «Ձինվորականների համար մշակութային ժառանգության պաշտպանության ձեռնարկում», լինելով ողջ մարդկության ինքնության կենսական մասը՝ ժառանգության ոչնչացումով հենց մարդկությունն է զրկվում իր անփոփարիների արժեքներից: Ըստ այդմ՝ արցախահայության ժառանգության ոչնչացումը կարող է հանգեցնել աշխարհի մշակութային արժեքների անվերադարձ կորստի և աղքատացնել աշխարհի մշակութային բազմազանությունը: Արցախի ժառանգությունը ստեղծել է արցախահայությունն իր պատկերացումներին ու հմտություններին համապատասխան, իսկ Ադրբեջանի քաղաքականությունը, ինչպես ակնհայտ է, ուղղված է հենց այդ ժառանգության նենգափոխմանն ու խեղաթյուրմանը: Ադրբեջանը, համաձայն միջազգային հռչակագրերի և իր իսկ ստանձնած պարտականությունների, հանձնառու է անադարտ պահել արցախահայության ժառանգությունը, պահպանել նրա իսկությունն ու ամբողջականությունը: Եվ հենց այդ նույն կոնվենցիան, որը վկայակոչել է Ադրբեջանի մշակույթի նախարարությունը (https://t.me/Talish_vestnik/21490), իր 4-րդ հոդվածով արգելում է վանդալիզմի, ոչնչացման կամ ձևափոխման ցանկացած գործողություն և բացարձակ արգելք դնում մշակութային արժեքների դեմ ուղղված հաշվեհարդարի գործողությունների վրա:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Ա.թ. մարտի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում նշվեց նշանավոր գիտնական, հասարակական գործիչ, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի 100-ամյակը: Հոբելյանական միջոցառմանը ներկա էին ՀՀ նախագահ Վահագն Խաչատրյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը, ՀՀ ԳԱԱ ղեկավար կազմը, Հայ-ռուսական համալսարանի ղեկավար Արմեն Դարբինյանը, Երևանի պետական համալսարանի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը, ակադեմիկոս



երկրի, ժողովրդի, ազգային արժեքների նկատմամբ, և, իհարկե, գիտությունների ազգային ակադեմիայի: Ակադեմիայի նկատմամբ նրա վերաբերմունքը և՛ որդիական էր, և՛ ծնողական: Նա անշափ մեծ կարևորություն էր տալիս գիտությանը, ինչպես նաև ակադեմիայի գոյությանը: Անձնապես մեծ պատասխանատվություն էր զգում ակադեմիայի զարգացման համար, բազմաթիվ հրապարակումներում արտահայտվել է ակադեմիայի մասին՝ որպես գիտության օրրանի: Նա շատ ծանր էր տանում գիտության նկատմամբ քաճառակալական վերաբերմունքը և ոչ բավարար ռազմավարությունը, ֆանտաստիկ կարևորում էր ազգային արժեքը և ազգա-

ՀՀ ԳԱԱ-ում նշվեց նշանավոր գիտնական, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի 100-ամյակը

Սերգեյ Համբարձումյանի զավակները, թոռները, գործընկերներն ու աշակերտները:

Ողջունելով հյուրերին՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը նշեց. «Լրացավ մեր ժամանակների ականավոր գիտնական, դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկայի բնագավառում մի շարք գիտական նոր ուղղությունների ստեղծող, մեխանիկայի հայկական գիտական դպրոցի հիմնադիրներից մեկի՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանի ծննդյան 100 ամյակը»:

Սերգեյ Համբարձումյանը ծնվել է Ալեքսանդրոպոլում, իրավաբանի ընտանիքում: 1942 թ.-ին զերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական մեխանիկայի ֆակուլտետը և նշանակվել դասախոսական աշխատանքի Ույն ինստիտուտում: 1952 թ.-ին Մոսկվայում՝ Մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտում, նա պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը, 1953 թ.-ին ստացել է պրոֆեսորի կոչում, 1956 թ.-ին ընտրվել է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, իսկ 1965-ին՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի իսկական անդամ:

Սերգեյ Համբարձումյանի ակտիվ մասնակցությամբ 1955 թ.-ին հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտը, որի տնօրենն էր 1959-71 թթ.-ին:

Սերգեյ Համբարձումյանի առաջին իսկ աշխատանքները գրավեցին համաշխարհային գիտական հանրության ուշադրությունը՝ նախադրյալ ստեղծելով այդ տարիներին նոր ձևավորվող մեխանիկայի հայկական դպրոցի միջազգային ճանաչման համար:

Սերգեյ Համբարձումյանի գործունեությունն ուղեկցվել է գիտական և մանկավարժական բարձրորակ կադրերի մի քանի սերունդների աճեցմամբ: Լինելով Երևանի պետական համալսարանի ղեկավար և գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ՝ նա էապես նպաստել է նաև հայագիտության զարգացմանը:

Սերգեյ Համբարձումյանն Աստղագիտության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս էր, Միջազգային ճարտարագիտության ակադեմիայի պատվավոր անդամ, Գիտության, կրթության, արդյունաբերության և արվեստի միջազգային ակադեմիայի (ԱՄՆ) իսկական անդամ, Հայաստանի փիլիսոփայության ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, Ռուսաստանի Տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի նախագահության անդամ, Սլովակիայի Գիտությունների ակադեմիայի մեխանիկների միության պատվավոր անդամ, Բրատիսլավայի համալսարանի պատվավոր դոկտոր, Հայաստանի Հանրապետության մեխանիկների միության հիմնադիրը և պատվավոր նախագահը, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի «Ձեկույցներ» ամսագրի գլխավոր խմբագիրը, գիտական և մասնագիտական մի շարք խորհուրդների անդամ, եղել է Լեհիայում և Պետական մրցանակների կոմիտեի անդամ:

Գիտության ակադեմիայի գործիչ Սերգեյ Համբարձումյանը պարգևատրվել է «Տիգրան Մեծ», «Սուրբ Մեսրոպ» և «Սուրբ Սահակ», Լեհիայի «Աշխատանքային կարմիր դրոշմ», Յան Կոմենսկու «Հոկտեմբերյան հեղափոխության», «Պատվո նշան», ՌԴ և ՀՀ ժողովուրդների «Բարեկամություն» շքանշաններով և մեդալներով:

Սերգեյ Համբարձումյանի ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Լենսեր Աղալովյանը համոզեց եկավ «Սերգեյ Համբարձումյան» գիտնական, քաղաքացի» գեկույցով: «Անգնահատելի է Սերգեյ Համբարձումյանի թողած գիտական մեծ ժառանգությունը, որն այսօր էլ շարունակում են հաջողությամբ զարգացնել նրա աշակերտներն ու համախոհները, որոնք երկար տարիներ կապահպանեն ակադեմիայի գիտնականի, հիմնալի մանկավարժի, փայլուն հռետորի ու վեհաձեռն մարդու պայծառ հիշատակը», - նշեց Լենսեր Աղալովյանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանը իր խոսքում ասաց. «Այս պատմական դաշիվում այսօր նշում ենք խորհրդանշական շփումներ չեն ունեցել Սերգեյ Համբարձումյանի հետ, բայց շատ ուշադիր են եղել իր ամեն խոսքին, ամեն շարժմանը՝ ուսանող տարիներից սկսած: Սերգեյ Համբարձումյանի հիշատակը միշտ պետք է վառ մնա»:

Հայ-ռուսական համալսարանի ղեկավար Արմեն Դարբինյանը շնորհակալություն հայտնեց Սերգեյ Համբարձումյանի և իր ընտանիքի, որ առնչվել ենք մեծագույն հայ գիտնականի և քաղաքացու հետ: «Սերգեյ Համբարձումյանը մեծ անձնական պատասխանատվություն ուներ

յին ինքնությունը: Ես նաև պետք է նշեմ այն մեծ վերելքի մասին, որը մեր համալսարանի ուսանողությունն ապրեց Սերգեյ Համբարձումյանի հետ շփման ժամանակ: Ի դեմս Համբարձումյանի՝ մեր երիտասարդությունը տեսնում էր, թե ինչպես է պետք ծառայել գիտությանը, նվիրված լինել գիտությանը և ինչպես է պետք ողնաշարը ուղիղ պահել: Այդ ողնաշարի ուղիղ լինելը Սերգեյ Համբարձումյանի և՛ քաղաքացիական, և՛ գիտական բարձրագույն արժեքների դրսևորումն ու մարմնավորումն էր»:

Երևանի պետական համալսարանի ղեկավար Հովհաննես Հովհաննիսյանը ասաց. «Անգնահատելի են այն հիմքերը, որոնք Սերգեյ Համբարձումյանը դրել է Երևանի պետական համալսարանում, երբ համալսարանի ղեկավարն էր: Մենք փորձելու ենք անելու առավելագույնը, որպեսզի Երևանի պետական համալսարանը մշտապես լինի այն բարձունքին, որին եղել է Սերգեյ Համբարձումյանի օրոք»:

Սերգեյ Համբարձումյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումները շարունակվեցին մարտի 18-ին՝ Հայ-ռուսական համալսարանում: ՀՀ-ի նորակառույց մասնաշենքում տեղի ունեցավ ՀՀ-ի գրադարանը Սերգեյ Համբարձումյանի անվամբ կոչելու արարողությունը: Այնուհետև նրա անունը կրող ՀՀ-ի գրադարանում բացվեց Սերգեյ Համբարձումյանի գեղանկարների անհատական ցուցահանդեսը: Հանդիսավոր արարողությունների շարքում էին Սերգեյ Համբարձումյանի 100-ամյա հոբելյանին նվիրված մանկանիշի մարման հանդիսավոր արարողությունը և Գագիկ Սարգսյանի Սերգեյ Համբարձումյանի կյանքին և գործունեությանը նվիրված «ԲՀԴԺ ԸՀԾԾԸԸ 21 ԹԺԾԸԸ» գրքի շնորհանդեսը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ-ում ներկայացվեց «Ռուսաստանում ինչեփոխվող» ստեղծած ռուս-հայկական գործընկերության ինտերակտիվ քարտեզը

Ա.թ. մարտի 1-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ կլոր սեղան՝ նվիրված Հայաստանում «Ռուսաստանում ինչեփոխվող» ներկայացուցչության կողմից ստեղծված ռուս-հայկական գործընկերության ինտերակտիվ պատմական քարտեզի ներկայացմանն ու քննարկմանը: Քարտեզը ներառում է տեղեկատվություն 19-րդ դարի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների մասին: Այն ցույց է տալիս աշխարհագրական դիրքերը, տեսարանները՝ պատմական և ժամանակակից, ինչպես նաև ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների հե-



րոսների մարտերի և թաղման վայրերի նկարագրությունը, հուշարձաններն ու ամրոցները:

Հայաստանում «Ռուսաստանում ինչեփոխվող» ներկայացուցչության ղեկավար Վադիմ

Ֆեֆիլովը, ողջունելով ներկայից, ասաց. «Ինտերակտիվ պատմական քարտեզի ստեղծմանն ուղղված այս նախագիծը մեզ համար շատ կարևոր է: Նախագիծը մեկնարկել է անցյալ տարի, ներկայումս ունենք

պիլոտային տարբերակը: Մենք ակնկալում ենք գիտական հանրության աջակցությունն այս նախագծի կատարելագործման համար»:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը նշեց, որ 19-րդ դարի պատմական իրադարձությունները հետաքրքիր են նաև գիտական տեսանկյունից. «Քննարկվող հարցը շատ ակտուալ է հատկապես ներկայիս աշխարհաքաղաքական իրականության մեջ: 19-րդ դարը ճակատագրական էր հայ ժողովրդի և Ղարաբաղի ժողովրդի համար, երբ Արևելյան Հա-

յաստանի և Ղարաբաղի տարածքները ներառվեցին Ռուսաստանի կազմի մեջ, ինչն ունեցավ դրական ազդեցություն տնտեսության, գիտության, մշակույթի վրա, ինչպես նաև պետականության վերականգնման համար:

Ցավոք, մեր հարևանները փորձում են խեղաթյուրել պատմությունը, անգամ ստիպում են ռուսական իշխանություններին հրաժարվել «Արևելյան Հայաստան» արտահայտությունից: Նման քաղաքականությունը, իմ կարծիքով, հղի է զլորալ ճիսկերով, ինչպիսին են Ղարաբաղի և Նախիջևանի ներառումն Ադրբեյջանի կազմի մեջ 20-րդ >5

ՀՀ ԳԱԱ և ՌԳԱ համագործակցության արդյունքում Հայաստանում առաջին անգամ կիրականացվի աերոմագնիսական հետազոտություն

Ս.թ. փետրվարի 17-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը Մոսկվայում հանդիպել է Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՌԳԱ ակադեմիկոս Ալեքսանդր Գլիկոյին: Հանդիպմանը մասնակցել են ՌԳԱ երկրաֆիզիկական կենտրոնի աշխատակիցները՝ գիտական ղեկավար, ՌԳԱ ակադեմիկոս Ալեքսեյ Գվիշիանին, տնօրեն, ՌԳԱ թղթակից անդամ Անատոլի Սոլովյովը, գիտության գծով փոխտնօրեն Բորիս Դզերոնը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են ՌԳԱ երկրի մասին գիտությունների բաժանմունքի ինստիտուտների



և ՀՀ ԳԱԱ քիմիայի և երկրի մասին գիտությունների բաժանմունքի համագործակցության հարցերը, որոնք վերաբերում են ՌԳԱ-ի և ՀՀ ԳԱԱ-ի միջև ստորագրված գիտատեխնիկական համագործակցության ճանապարհային քարտեզում նշված ծրագրերի իրականացմանը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ս.թ. ապրիլին Հայաստանում իրականացնել

«Գյուլագարակ» մագնիսական դիտարանի տարածքի բարձր ճշգրտության աերոմագնիսական հանույթ:

«Նման աշխատանք Հայաստանում կիրականացվի առաջին անգամ: Ռուսական կողմը կբերի երկու անօդաչու թռչող սարք, որոնք իրականացնելու են աերոմագնիսական հանույթ ամբողջ դիտարանի տարածքում: Այդ աշխատանքը մեզ հնարավոր

ություն կտա պարզելու լեռնային ապարների մագնիսական հատկությունները, կառուցելու եռաչափ թվային մոդելը, ինչպես նաև լիարժեք պատկերացնելու դիտարանի՝ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու խնդիրը: Սա թույլ կտա, որպեսզի աստղադիտարանը ընդգրկվի «INTERMAGNET» ցանց՝ ինստիտուտների համաշխարհային կոնսորցիում, որոնք մագնիսաչափերով գրանցում են երկրի իրական ժամանակում փոփոխվող մագնիսական դաշտը՝ ըստ երկրամագնիսական դաշտի գրանցումների մեթոդաբանության առումով միջազգային հստակ չափորոշիչներին բավարարող ստանդարտների»,- ասաց ՀՀ ԳԱԱ Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի տնօրեն Ջոն Կարապետյանը: Նա

նշեց, որ նման հետազոտությունը կխթանի երկրի մագնիսական դաշտի ուսումնասիրության ոլորտում հայ-ռուսական համագործակցության զարգացումը:

«Գյուլագարակ» մագնիսական դիտարանը ստեղծվել է 2019 թվականին ՀՀ ԳԱԱ-ի և ՌԳԱ-ի կողմից: Հայկական կողմն իրականացրել է շինարարությունը՝ բացառելով երկաթային բաղադրիչը, իսկ ռուսական կողմը տրամադրել է թանկարժեք սարքավորումները: «Մագնիսական դաշտի վրա խոտորիչ ազդեցությունը բացառելու համար դիտարանը կառուցվել է ապակեպլաստիկ կոմպոզիտային նյութերից, ինչն ԱՊՀ տարածքում իրականացվել է առաջին անգամ»,- նշեց Ջոն Կարապետյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նիստում քննարկվեցին նոր օրենսդրական միջոցներն ու «EU4Sevan» ծրագրի աշխատանքները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը նորընտիր նախագահ, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանի գլխավորությամբ ս.թ. փետրվարի 25-ին անցկացրեց հերթական նիստը: Բարդուխ Գաբրիելյանն այդ պաշտոնում փոխարինել է «Հայքրմախագիծ ինստիտուտ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Յուրի Ջավադյանին:

Նիստին մասնակցել են ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը, ՀՀ ԳԱԱ բուսաբանության

ինստիտուտի գեոբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ Գեորգի Ֆայվուշը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրենի գիտական գծով տեղակալ, հաշվողական և իմացական ցանցերի բաժնի վարիչ Վլադիմիր Սահակյանը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող, աշխարհագրական տեղեկատվական համակարգի մասնագետ Ալեքսանդր Առաքելյանը, ինժեներ-հիդրոլոգ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ալեքսեյ Թարվերոյանը, հիդրոլոգ Օֆելյա Գրիգորյանը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտաշխատող Արտաշես Միրզոյանը:

Նիստի օրակարգում հետևյալ հարցերն էին՝

- Սևանա լճի էկոլոգիական խնդիրների գիտական



մոտեցումները: 2022 թ.-ին կայանալիք կլոր սեղանի կազմակերպչական աշխատանքների քննարկում,

- EU4Sevan ծրագրի շրջանակներում իրականացվող և պլանավորվող աշխատանքների վերաբերյալ պարբերական թարմացումներ, համագործակցության խթանում,

- ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների քննարկում,

- քաղաքացի Ռուբեն Մովսիսյանի կողմից նախատեսվող «Սևան» ազգային պարկի տարածքում՝ Ծովագարդ գյուղի լճափնյա 12/3

հասցեում՝ միախարկ 6 շարժական քոթեջների եսթիզային միջավայրի վրա ազդեցության միջանակազնափառման հայտի քննարկում:

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Ռուբեն Հարությունյանը նշեց Հայաստանում ջրերի կենսաբանական մոնիթորինգի անցկացման անհրաժեշտության մասին: ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը համաձայնեց այդ տեսակետի հետ: «Հայաստանում կենսաբանական մոնիթորինգ իրականացվում է միայն Սևանա լճում՝ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից, որն ունի 100 տարվա տվյալներ: Մնացած վայրե-

րում իրականացվում է միայն ֆիզիկաքիմիական մոնիթորինգ, բայց օրգանիզմների մոնիթորինգ չի արվում»:

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտական գծով տնօրենի տեղակալ Վլադիմիր Սահակյանը բարձրացրեց տվյալների շտեմարանի ստեղծման հարցը: «Մեր ինստիտուտը կապահովի հարթակ, որտեղ կարելի է իրականացնել Սևանա լճի վերաբերյալ տվյալների պահպանումն ու մշակումը»,- ասաց նա:

ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող Ալեքսանդր Առաքելյանը մանրամասնորեն ներկայացրեց «EU4Sevan» ծրագրի բաղադրիչները և 2021 թ.-ին իրականացված աշխատանքները:

Սևանա լճին առնչվող նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հարցերը որոշվեց քննարկել ավելի մանրամասնորեն, որից հետո հանձնաժողովը կներկայացնի իր առաջարկություններն ու եզրակացությունները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



Բացահայտվել է կորոնավիրուսի ծանր ընթացքը կանխորոշող իմունոգենետիկական նոր տարրերակ



ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի, Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստրի և «ClinSoft» կազմակերպության համատեղ հետազոտությունների արդյունքում բացահայտվել է կորոնավիրուսի ծանր ընթացքը կանխորոշող իմունոգենետիկական HLA-C*04:01 տարրերակը:

Վերահաստատելով այլ գործոնների նշանակությունը հիվանդության ընթացքի վրա, ինչպիսիք են արական սեռը և մեծ տարիքը, բացահայտվել է, որ Հայաստանի բնակչության շրջանում վարակի ծանր ընթացքին նպաստում են նաև մարդու գենոմում հյուսվածքափոխանակողությունը համար կարևոր HLA-C*04:01 տարրերակի առկայությունը և քանակը: «HLA-C*04:01 տարրերակի բացակայությունը պայմանավորում է հիվանդության անախտամիջ ընթացքը բնակչության մեծ մասի համար: Պարզվել է նաև, որ այս տարրերակի երկակի կրելը խաթարում է իմունային բջիջների կողմից օրգանիզմ ներթափանցած կորոնավիրուսի ճանաչումը և դանդաղեցնում իմունային պատշաճ պատասխանի ձևավորումը՝ նպաստելով հիվանդության ծանր ընթացքին»,- ասաց ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի մարդու գենոմիկայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող Կարինե Մայիլյանը:

Նա նշեց, որ հետազոտությունը ներառել է Հայաստանի ավելի քան 3000 բնակչի բերանի խոռոչի թուլակից կամ արյունից անջատված և սեքվենավորված ԴՆԹ նմուշներ: Սեքվենավորման և կլինիկական տվյալների հի-

ման վրա մշակվել է հիվանդության ծանր ընթացքի ռիսկի գնահատման ալգորիթմ:

«Համայնի առողջապահության տեսակետից այս կարևոր արդյունքը հիմնավորում է թիրախային խմբի առաջնահերթ պատվաստման անհրաժեշտությունը COVID-19-ի դեմ, ինչը թույլ կտա կանխել հիվանդության ծանր ընթացքը»,-նշեց ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը:

Հետազոտության արդյունքները տպագրվել են հեղինակավոր «Frontiers in Immunology» գիտական ամսագրում (Hovhannisyana A, Madelian V, Avagyan S, Nazaretyan M, Hyussyan A, Sirunyan A, Arakelyan R, Manukyan Z, Yepiskoposyan L, Mayilyan KR, Jordan F. HLA-C*04:01 Affects HLA Class I Heterozygosity and Predicted Affinity to SARS-CoV-2 Peptides, and in Combination With Age and Sex of Armenian Patients Contributes to COVID-19 Severity. Front Immunol. 2022 Feb 3;13:769900. doi: 10.3389/fimmu. 2022.769900):

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Հայաստանում նոր կորոնավիրուսի տարբերակների մոլեկուլաբանետիկական մոնիթորինգի արդյունքները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի մարդու գենոմիկայի լաբորատորիայի, կենսահնքորմատիկայի գիտական խմբի և Հայ-ռուսական համալսարանի կենսահնքոններիայի, կենսահնքորմատիկայի և մոլեկուլային կենսաբանության ամբիոնի կողմից 2021թ.-ից իրականացվում է Հայաստանում շրջանավոր նոր կորոնավիրուսի տարբերակների մոլեկուլաբանետիկական ամենամայա մոնիթորինգ՝ հաջորդ սերնդի (երրորդ սերնդի Oxford Nanopore MinION) սեքվենավորման կիրառմամբ: Այս աշխատանքներն իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի հետ համատեղ:

Այս ընթացքում իրականացվել է COVID-19-ի ՊՇՈ դրական արդյունքով պացիենտների 250-ից ավելի նմուշներում կորոնավիրուսի ամբողջական գենոմի վերծանում:

Հետազոտությունների արդյունքներով դեռևս 2021 թ. հունվար ամսվա դրությամբ Հայաստանում շրջանավորում էր SARS Cov-2-ի D681G տարբերակը: Արդեն մարտ ամսին երկրի ներթափանցեց «Ալֆա» կամ բրիտանական տարբերակը, որը հունիս ամսին տեղակալվեց ավելի վտանգավոր՝ «Դելտա» տարբերակով: Ներկայումս Հայաստանում շրջանավորում է COVID-19 «Օմիկրոն» տարբերակը, որն այսօր դոմինանտ շրջատիպն է մեր երկրում: Ամենաթարմ տվյալներով՝ հայտնաբերվել է նաև «Օմիկրոնի» «BA.2» ենթատարբերակը, որն ավելի վարակիչ է և, համաձայն մի շարք հետազոտությունների, կարող է ունենալ հիվանդության ավելի ծանր ընթացք:



«Այս հետազոտությունների ամենամայա իրականացումը թույլ է տվել վերահսկել Հայաստանում COVID-19 նոր գենատարբերակների ներթափանցումը և տեղակալման դինամիկան, պարզաբանել վիրուսի գենատարբերակների ներթափանցման հնարավոր ուղիները, գնահատել մուտացիաների ազդեցությունը ՊՇՈ թեստերի ճշտության վրա, ինչպես նաև հիմք ապահովել համաճարակային միջոցառումների ճիշտ կազմակերպման և դրանց շտկման համար՝ կախված տվյալ պահին երկրում շրջանավոր տարբերակից: Այս ծրագիրը նաև օրինակ է, թե գիտական կազմակերպություններն ինչպես կարող են աջակցել պետական կա-

ռավարման համակարգին՝ լուծելու կարևոր խնդիրներ»,- ասաց ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն Արսեն Առաքելյանը:

Հետազոտության շրջանակում ստացված գենոմային տվյալները համալրել են GISAID Epicov տվյալների շտեմարանը, որը SARS-CoV-2 հաջորդականությունների՝ աշխարհի ամենամեծ պահոցն է:

Հետազոտություններն իրականացվել են ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի բազային ծրագրի, ՀՀ գիտության կոմիտեի՝ սարքավորումների համար հատկացվող դրամաշնորհների, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի երկրորդ շրջափուլի շրջանակներում Հայ-ռուսական համալսարանում իրականացվող «Գենային ճարտարագիտության, գենոմի խմբագրման և 3-րդ սերնդի սեքվենավորման գերազանցության կենտրոն» դրամաշնորհային ծրագրի և Seeding Labs «Instrumental Access» սարքավորումների՝ 2017 և 2019 թթ.-ի դրամաշնորհների աջակցության շրջանակներում, առավելապես երիտասարդ գիտնականների ջանքերով: Նմուշները և սեքվենավորման նյութերի մի մասը տրամադրել է ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը:

Հետազոտությունների արդյունքները հրապարակվել են «The Evolving Faces of the SARS-CoV-2 Genome» և «Journal of Virological Methods» ամսագրերում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ-ում ներկայացվեց «Ռոսսոտորուդնիչեստվոյի» ստեղծած ռուս-հայկական գործընկերության ինտերակտիվ քարտեզը

➤3 դարի սկզբին, ինչը 100 տարի անց թույլ տվեց թուրքիային մտնել Հարավային Կովկասի տարածք և հայտարարել, որ մենք շարունակում ենք մեր նախնիների գործը: Ռուսական իշխանությունները, իմ կարծիքով, պետք է շատ ուշադիր և կշռադատված որոշեն ազգամիջյան և տարածքային բնույթի հարցերը:

Հայաստանում «Ռոսսոտորուդնիչեստվոյի» ներկայացուցչության պատմական ծրագրերի համակարգող Լիլիթ Ասոյանը նշեց. «Հատուկ տեղ է տրված առանձին անձանց, գործիչների, ովքեր նշանակալի դեր են ունեցել ռուս-հայկական հարաբերությունների հաստատման և զարգացման գործում: Մեր նպատակն է յուրաքանչյուրին հասցնել պատմական այդ տեղեկատվությունը՝ օգտագործելով ժամանակակից տեխ-

նոլոգիաները»:

Տուրիզմի հայկական ֆեդերացիայի նախագահ Մելիսա Ապրեսյանը նշեց. «Նման քարտեզը կարող է նպաստել տարածաշրջանում տուրիզմի զարգացմանը՝ տրամադրելով մատչելի տեղեկատվություն Հայաստանի տարածքում պատմական հուշարձանների վերաբերյալ: Իսկ տուրիզմն այն ուժն է, որը կարող է նպաստել ոչ միայն տնտեսության զարգացմանը, այլ նաև մշակութային, քաղաքական հարցերի որոշմանը»:

«Ռոսսոտորուդնիչեստվոյի» ներկայացուցչության էքոնոգրաֆիկ ծրագրերի համակարգող Ելենա Շուվալան մամրամասնորեն ներկայացրեց ինտերակտիվ քարտեզը՝ նշելով, որ ներկայումս քարտեզում արտացոլված են ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների պատմական ժառանգու-

յան 50 օբյեկտներ, որոնք գտնվում են Հայաստանի տարբեր շրջաններում: Հետագայում քարտեզը կհամալրվի:

Գիտնականները բարձր գնահատեցին նախագծի իրականացումը՝ կիսվելով իրենց կարծիքներով և առաջարկություններով:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանն ասաց, որ նախագիծն ունի մեծ և դաստիարակչական նշանակություն երիտասարդների համար. «Ես առաջարկում եմ մեր պատմաբանների հետ համագործակցելով ստեղծել այս քարտեզի կոնտենտը, որի հիման վրա էլ կարելի է ստեղծել ավելի կոնկրետ քարտեզներ և նախագծեր՝ ռուս-հայկական հարաբերությունների պատկերավորման համար»:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանն ասաց, որ ռուս-հայկական հարաբերությունների վերաբերյալ կա հարուստ գրականություն, և 19-րդ դարի ռուս հետազոտողների շնորհիվ պատմաբանները գրել են իրենց թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները: Նա նաև նշեց. «Արևելյան Հայաստան» արտահայտության հետ կապված հարցին դեռևս 1828 թ.-ի մարտի 21-ին պատասխանել է ռուս կայսր Նիկոլայ I-ը՝ ստեղծելով հայկական շրջան Նախիջևանի խանության տարածքում՝ դրանով իսկ ասելով, որ դա հայկական հող է»:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Զրանտ Ալեքսանի Ավետիսյանը (1927-2004) հայաստանյան և արտասահմանյան գիտական շրջանակներում հայտնի է ոչ միայն որպես ականավոր պատմաբան, այլև գիտության հմուտ կազմակերպիչ, Մարդ և Քաղաքացի:

Հր. Ավետիսյանը ծնվել է 1927 թ. մարտի 10-ին Ղա-րաբլիխա (այժմ՝ Վանաձոր) քաղաքում: 1944 թ. ավարտել է տեղի թիվ 6 միջնակարգ դպրոցը: 1949 թ.՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում ավարտելուց հետո, Հր. Ավետիսյանը հինգ տարի աշխատել է կոմերիտական և կուսակցական ղեկավար կառույցներում:

1954-ից Հր. Ավետիսյանի հիմնական աշխատավայրը դարձել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիան:

Այդ տարիներին Հր. Ավետիսյանն իր բազմակողմանի գիտակազմակերպչական գործունեությունը հաջողությամբ համատեղել է գիտահետազոտական աշխատանքի հետ: 1960 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1969 թ. Հր. Ավետիսյանին շնորհվել է պրոֆեսորի կոչում:

1979 թ. փետրվարին Հր. Ավետիսյանը ստանձնել է



ԱՎԵՏԻՍԻԱՆ ՀՐԱՆՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ (Ծննդյան 95-ամյակի առթիվ)

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը և անընդմեջ պաշտոնավարման 23 տարիների ընթացքում կատարել է ծանրակշիռ աշխատանք: Այդ ժամանակահատվածում նրա գործադրած անդուլ ջանքերի շնորհիվ ինստիտուտում ապրեց ստեղծագործական խաղաղ կյանքով, համալրվեց երիտասարդ կադրերով, հրատարակվեցին բազմաթիվ ուսումնասիրություններ: Ինստիտուտի կոլեկտիվն ակնառու ներդրում ունեցավ Հայոց պատմության դպրոցական դասագրքերի ստեղծման գործում:

1986 թ. Հր. Ավետիսյանն ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս:

2002-ին Հր. Ավետիսյանն ընտրվել է ԳԱԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, իսկ 2004 թ.՝ այդ պարտականություններից ազատվելուց հետո, ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանի հրամանով նշանակվել է Պատմության ինստիտուտի պատվավոր տնօրեն:

Վարչական և գիտահետազոտական աշխատանքին զուգահեռ Հր. Ավետիսյանը տասնյակ տարիներ կատարել է մանկավարժական եռանդուն աշխատանք Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում և «Հրաշյա Աճառյան» համալսարանում:

Հր. Ավետիսյանն իր ակտիվ մասնակցությունն է բերել նաև հանրապետության երիտասարդ պատմաբանների կայացման ու պատմաբան կարգերի սերնդափոխության ապահովման գործին՝ ղեկավարելով ասպիրանտների ու հայցորդների ընթացքը դեպի հասուն գիտություն, կարելիություն չափ հոգալով անգամ նրանց կեցության, աշխատանքային ու կենցաղային խնդիրների մասին: Ինքս էլ մեկն են Հր. Ավետիսյանի ասպիրանտներից, ով վաստակաշատ պատմաբանին համարում է իր ուսուցիչը, բարձր գնահատում նրա հոգատար վերաբերմունքն ուսանողների, ինչպես նաև հայոց պատմությունն իրենց մասնագիտությունը դարձրած, գիտության ոլորտում առաջին քայլերն անող ասպիրանտների ու հայցորդների նկատմամբ:

Հր. Ավետիսյանը եղել է 5 դոկտորական ատենախոսության գիտական խորհրդատու և 12 թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար:

Գիտակազմակերպչական ու գիտահետազոտական արդյունավետ գործունեության համար Հր. Ավետիսյանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:

Հր. Ավետիսյանը մահացել է 2004 թ. հոկտեմբերի 9-ին:

Ակադեմիկոս Հր. Ավետիսյանը թողել է մնայուն գիտահետազոտական ժառանգություն՝ նվիրված XX դարի սկզբին Այսրկովկասում ծավալված երիտասարդական ու հասարակական-քաղաքական շարժումներին և հայ ժողովրդի նորագույն պատմության բազմաթիվ հիմնահարցերին՝ հայոց ազգային բանակի ու Հայաստանի Առաջին հանրապետության ծնունդին, 1920 թ. Մայիսյան ապստամբությունը, Ղարաբաղի բռնակցմանը Ադրբեյջանին և այլն: Նա գրել է 16 մենագրություն ու ձեռնարկ, 100-ից ավելի գիտական հոդված, ունի նաև անավարտ մնացած մի քանի աշխատություն: Պատմաբանն իր աշխատություններում գիտական շրջանառության մեջ է դրել մեծ քանակությամբ արխիվային վավերագրեր, մոռացումից փրկել ու ընթերցող

լայն հասարակությանը ծանոթացրել է բազմաթիվ հայ հայրենամուկ գործիչների գործունեության մանրամասներին, լուսաբանել է մեր ազգային պատմության մի շարք կնճռոտ հիմնահարցեր:

Արցախյան ազգային-ազատագրական շարժման ծավալումը և Հայաստանի անկախության վերականգնման գործընթացը վճռորոշ ազդեցություն ունեցան հայտնի պատմաբանի գիտական որոնումների վրա: Արմատներով կարսեցի, բռնագաղթի տառապանքները երկու անգամ ապրած գերդաստանի ժառանգ Հր. Ավետիսյանը կենտրոնացավ հայոց պատմության հիմնահարցերի ուսումնասիրման վրա:

1994 թ., երբ Հայաստանի նորանկախ հանրապետությունը գտնվում էր քաղաքական ու սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ, Հր. Ավետիսյանը ռուսաց լեզվով հրատարակեց «Բրեստ-Լիտովսկ. ինչպես բռնակցվեցին թուրքիային Կարսը, Արդահանը, Բաթումը» ուշագրավ աշխատությունը: Հեղինակը նորահայտ արխիվային փաստաթղթերի հենքի վրա բնութագրում է ոչ միայն ժամանակի քաղաքական իրադարձությունները, այլև Բրեստ-Լիտովսկի բանակցությունների ընթացքն ու արդյունքները: Հիմնավորում է, որ պատերազմում պարտված Օսմանյան կայսրությունը, օգտագործելով նպաստավոր միջազգային պայմանները, շարունակելով ռազմաքաղաքական գործակցությունը Գերմանիայի հետ, կարողանում է Ռուսաստանին թելադրել իր պահանջները: Իսկ ռուսական դիվանագիտությունը, տարված համաշխարհային հեղափոխության պատրանքներով, հեշտությամբ Օսմանյան կայսրությանն է գիշում հայկական տարածքները: Մենագրության մեջ առաջին անգամ հանգամանորեն քննարկվում են Բրեստ-Լիտովսկի պայմանագրով հայ ժողովրդին պարտադրված ծանր կացության խնդիրները:

Սա միանգամայն մոր պատմագիտական մոտեցում էր Բրեստ-Լիտովսկի բանակցություններին և պայմանագրին, քանի որ խորհրդային պատմագրության մեջ կարևորվել էր լոկ այդ իրադարձություններին տրվող քաղաքական գնահատականը, իսկ բանակցություններում քննարկված ազգային-տարածքային մի շարք խնդիրներ, այդ թվում՝ արևմտահայկականը, շրջանցվել էին:

Այս աշխատության մեջ ձևակերպված հիմնադրույթները Հր. Ավետիսյանը զարգացրել և ամփոփել է «Հայկական հարցը 1918 թվականին» (1997 թ.) ծավալուն մենագրության մեջ: Դրանում Հայկական հարցը քննվում է ոչ միայն Բրեստ-Լիտովսկի, այլև Տրապիզոնի և Բաթումի բանակցությունների համատեքստում:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Հայկական հարցի վերաբերյալ իր հիմնական դրույթներն անհրաժեշտ շեշտադրումներով պատմաբանն արտացոլել է «Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս» (1998) աշխատության մեջ: Այն նվիրված է Սարգսյան-Կարապետի, Բաշ Ապարանի, Ղարաբլիխայի՝ 1918 թ. մայիսյան հերոսամարտերին, հայոց ազգային միասնությանը, որոնք ստիպեցին թուրքական բանակին ու կառավարությանը ճանաչել Հայաստանը, նրա ազգային անկախությունը և Հայաստանի դեմոկրատական Հանրապետությունը: Պատմաբանը հիմնավորում է, որ հայկական անկախ պետականությունը վերականգնվեց ոչ թե օտարի հոգածությամբ, այլ

հայոց բանակի և հայ ժողովրդի միասնական կամքով:

Փաստական վիթխարի նյութը Հր. Ավետիսյանին հնարավորություն է ընձեռել հայ ազգային շահերի տեսանկյունից վերլուծելու խորհրդային Ռուսաստանի և Օսմանյան կայսրության փոխհարաբերությունները, բացահայտելու դիվանագիտական հնարքների թուրքական զինամոցը, ներկայացնելու հաշտության բանակցությունների տարբեր փուլերում խորհրդային և թուրքական պատվիրակությունների կողմից Հայկական հարցի վերաբերյալ ինչեցված հարցադրումները, վեր հանելու թե՛ գերմանական դիվանագիտական աջակցությունը թուրքական զավթողական նկրտումներին և թե՛ խորհրդային կառավարության՝ զիջումների պարտվողական քաղաքականությունը, օտարալեզու ուշագրավ արխիվային վավերագրերի հենքի վրա ներկայացնելու 1918 թ. զարմանը Բեռլինում թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության գործունեության նպատակները, առանձնահատկությունները և ուղղությունները: Հր. Ավետիսյանի ուսումնասիրություններում բացահայտվում են քաղաքական այն բոլոր իրողությունները, որոնց հետևանքը դարձան հետագա տարիներին Հայկական հարցի լուծման վայրիվերումները:

Ջարգացնելով իր հիմնադրույթները՝ ակադեմիկոսը հիմնավորել է նաև, որ 1918-1920 թթ. կովկասյան հանրապետությունների կոնֆեդերացիայի գաղափարը ոչ այլ ինչ էր, քան համաթրքության նկրտումների նոր՝ դիվանագիտական դրսևորումը Անդրկովկասում: Հր. Ավետիսյանը վեր է հանել այդ գաղափարի և Կոստանդնուպոլսից մինչև Անդրկովկաս միասնական մանդատի ամերիկյան նախագծի հակահայկական էության ընդհանրությունը: Հայկական հարցի ընթացքի համար վտանգավոր համարելով ինչպես 1920-1921 թթ., այնպես էլ 1945 թ. Պոտսդամի խորհրդաժողովում ռուս-թուրքական ռազմաքաղաքական մերձեցման ազդեցությունը՝ նա իրավացիորեն նույն միտումն է նկատում նաև 1991 թ. մարտի 16-ին Մոսկվայում տեղի ունեցած Մ. Գորբաչով-Թ. Օզալ հանդիպման արդյունքներում («Հայկական հարցը 1918 թվականին, էջ 340-358»):

Պատմաբան Հր. Ավետիսյանի հետաքրքրությունների շրջանակը ներառում էր նաև Ռուսական կայսրության բանակում ծառայած հայազգի բարձրաստիճան սպաների կյանքի ու գործունեության, Հայաստանի Առաջին հանրապետության բանակի ձևավորման ու կայացման հիմնախնդիրները: Ուսումնասիրության արդյունքը դարձավ «Հայազգի գեներալները Ռուսական կայսրությունում» («Генералы-армяне в Российской империи», 2007) աշխատությունը: Հր. Ավետիսյանի կյանքի այդ վերջին ավարտում մենագրությունը հրատարակվեց ակադեմիկոսի 80-ամյակի առթիվ՝ որպես հարգանքի տուրք անվանի գիտնականի և քաղաքացու հիշատակին: Այս աշխատության մեջ լուսաբանվում է XVIII դ. վերջից մինչև Առաջին աշխարհամարտի տարիներն ընդգրկող ժամանակահատվածում Ռուսական կայսրության կառավարման համակարգում ծառայած և տարբեր արշավանքների ու ռազմական գործողությունների մասնակցած 140 հայազգի գեներալների կյանքի և գործունեության հակիրճ պատմությունը: Ակադեմիկոսը նշում է, որ 150 տարվա ընթացքում Ռուսական կայսրության բնակչության ընդամենը 0,96 %-ը կազմող հայերը ռուսական բանակին տվել են 155 գեներալ («Հայազգի գեներալները Ռուսական կայսրությունում», էջ 7-8): Միաժամանակ շեշտելով, որ այդ տվյալը վերջնական չէ, նա մոր ուսումնասիրողին հղում է իր սկսած գործը շարունակելու պատգամը:

Ակադեմիկոս Հր. Ավետիսյանի աշխատությունները հիմնարար ներդրում են հայ պատմագիտության մեջ և ուղենշային նշանակություն ունեն հայոց մոր ու նորագույն պատմության հիմնախնդիրները հետազոտող մասնագետների համար:

2017 թ. մարտի 10-ին՝ Հր. Ավետիսյանի ծննդյան օրը, ԳԱԱ պատմության ինստիտուտի նախածեռնությամբ Մարշալ Բաղրամյան 50 բ հասցեում՝ գիտնականի ապրած տան պատին, տեղադրվեց նրա հիշատակը հավերժացնող հուշաքար:

Հիրավի, Հր. Ավետիսյանն ապրել է իմաստավորված կյանք՝ գործընկերների և ուսանողների մեջ թողնելով ջերմ հիշողություններ իր հետևողականության, բարեխղճության, նպատակասլացության, հոգատարության, նրբանկատության, խորաթափանցության ու իմաստության մասին:

Ակադեմիկոս Զրանտ Ավետիսյանի վերջին ասպիրանտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ. գ. թ., դոցենտ Լիլիթ Յովհաննիսյան

ՀՀ ԳԱՆ ՕԳ-ՔԳ-ՏԿ-ում առաջարկվում է լյարդի ցիռոսի բուժման նոր մոտեցում

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի «դեղաբանության և պաթոհիստոլոգիայի» լաբորատորիայում իրականացվել է լյարդի տոքսիկ ցիռոզի ուսումնասիրում: Արդյունքում հայտնաբերվել է նախնական ախտորոշման շրջայական կապը և դրա բուժման նոր մոտեցումը՝ համակցված բուսական դեղապատրաստուկներով:

Այս գիտական արդյունքը ստացվել է ՕԴՔՏԿ-ի «դեղաբանության և պաթոհիստոլոգիայի» լաբորատորիայի գիտաշխատող Լիլիթ Արշակյանի ատենախոսական աշխատանքի շրջանակներում՝ լաբորատորիայի աշխատակիցների աջակցությամբ, ըստ համապատասխան ցուցումների:

«Լյարդ-թոք-երիկամ» ֆունկցիոնալ կապով ուսումնասիրվել է լյարդի տոքսիկ ցիռոզի զարգացման դինամիկան, որի վերլուծության արդյունքում նշակվել է հեպատոպրոտեկտորների՝ Ֆլամին/Սիլիմարին բուսական խառնուրդի բուժական ազդեցությունը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լյարդի տոքսիկ ցիռոզի ախտահարման պայմաններում, նախքան ցիռոզի պաթոլոգիայի դրսևորումը, ի հայտ են գալիս թոքերի և երիկամների ախտաբանական գործընթացներ՝ ընդհուպ մինչև ըստ սեռային պատկանելիության տարբերության: Ուսումնասիրելով բուսական խառնուրդի երկու տարբեր համակցումներ՝ Ֆլամինի և Սիլիմարինի, որոնք նույնպես ստացվել են կենտրոնում, պարզել ենք արդյունավետ հարաբերակցությունը և դրանք բուժական ելքերի դինամիկան զարգացող ցիռոզի ժամանակ: «Ստացված արդյունքների կիրառման դեպքում նշված օրգանների ախտահարումը կբացահայտի ցիռոզի ծագումնաբանությունը՝ կիրառելով այն գործնական բժշկության մեջ», - ասաց Լիլիթ Արշակյանը:



Նա նշեց, որ առաջիկա նպատակներից է իրականացնել լյարդի տոքսիկ ցիռոզի նախանշանների կանխատեսման, զարգացման և նոր խառնուրդով բուժման ընթացքի հետազոտություն՝ լյարդի, թոքերի, երիկամների պատճառահետևանքային կառուցվածքաֆունկցիոնալ փոփոխությունների ուսումնասիրման մոտեցմամբ: «Նպատակն է ուսումնասիրել նոր խառնուրդի հեպատոպրոտեկտոր հատկությունը, որոնք անջատվել են Հայաստանում աճող *Helycrisum Rubicundum* և *Silybum marianum* բույսերից և հետագայում ներդնել այն ցիռոզի բուժման պրակտիկայում, որը կարող է կիրառվել բուժ-հաստատություններում: Առաջիկայում պլանավորում ենք նոր բուսական հումքի տարբեր համակցումների ակտիվության գնահատում՝ առաջարկված մոդելով լյարդի ախտահարումները վերականգնելու նպատակով», - ասաց Լիլիթ Արշակյանը:

Աշխատանքները ներկայացվել են միջազգային գիտաժողովներում: Ներկայում հետազոտությունների տվյալներն ամբողջականացվում են:

Հետազոտությունների որոշ մասն իրականացվել է ասպիրանտների աջակցության ծրագրի շրջանակներում՝ ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի կողմից՝ PMI Science-ի աջակցությամբ:

ՀՀ ԳԱՆ գիտության համրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Լույս տեսավ Արծվի Բախչինյանի «Ռուբեն Մամուլյան. Արվեստագետը և հայը» աշխատությունը

253 էջանոց աշխատությունը նվիրված է մեծամուն ռեժիսոր, համաշխարհային ու հատկապես ամերիկյան կինոյում իր բազմաթիվ նորարարություններով հայտնի, դասական իր գործերով համաշխարհային ճանաչման ու գնահատականի արժանացած բեմադրիչ Ռուբեն Մամուլյանի կյանքին ու գործին:

Լուսանկարներով հարուստ գիրքը հրատարակվել էղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի մատենաշարով, «Ոսկան Երևանի» տպագրատանը, խմբագրությամբ հեղինակի հոր՝ գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր Հենրիկ Բախչինյանի:

Շնորհավորում ենք:



ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ

Հայ գիտական հանրությունը մեծ կորուստ կրեց: Կյանքի 65-րդ տարում կյանքից հեռացավ վաստակաշատ և ազնիվ գիտնական, մտավորական, ՀՀ ԳԱՆ թղթակից անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի երկարամյա տնօրեն Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանը:

Ծնվել է 1957 թ. մայիսի 21-ին Լոռու մարզի Քարինջ գյուղում: 1979 թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Ժողովրդական տնտեսության ինստիտուտը, ապա ընդունվել ասպիրանտուրա: Զբաղեցրել է պատասխանատու պաշտոններ ֆինանսական, հարկային, բանկային, արտադրական ու գիտական ոլորտներում: Դոկտորական ատենախոսություն պաշտպանել է 2004 թ., պրոֆեսորի կոչում ստացել է 2007 թ.: Պրոֆեսոր Հարությունյանի հետաքրքրությունների շրջանակը լայն էր: Նա թողեց գիտական մեծ ժառանգություն:

2010 թ. ընտրվել է ՀՀ ԳԱՄ թղթակից անդամ: Դասախոսել է ՀԴՏՀ-ում և ԵՊՀ-ում: 2013 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով, 2014 թ., 2016 թ. և 2018 թ. «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթների հաղթող է: 27 մենագրության և ավելի քան 140 գիտական հոդվածների հեղինակ է: ՀՀ կառավարությանն է ներկայացրել 15 կիրառական առաջարկություններ, ունի 5 տաճարակից ավելի պաշտպանած ասպիրանտներ ու հայցորդներ: Նրա պատասխանատվությամբ նախապատրաստվել և հրապարակվել են գիտական հոդվածների 21 ժողովածուներ:

Վլ. Հարությունյանը գիտականորեն հիմնավորել է հետևյալ դրույթները:

Բյուջեի եկամուտները դասակարգել ըստ հարկ վճարողների խմբերի, ըստ հարկման օբյեկտների ու բազաների և ըստ ոլորտների. մոտեցումներ, որոնք հարկային օրենսդրությամբ դրված են հարկման մեխանիզմների հիմքում: Նրանք իրենց արտացոլումը չեն ստացել «Բյուջետային համակարգի մասին» և ամեն տարի ընդունվող «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներում:

Նա առաջարկել է համապատասխան փոփոխություններ կատարել հարկային օրենս-

դրության մեջ, որոնք որոշակիացված են ինչպես ըստ առանձին հարկատեսակների մասին ՀՀ օրենքների, այնպես էլ ըստ դրանց համապատասխան հոդվածներում կատարվելիք փոփոխությունների՝ հնարավորություն ընձեռելով ընդլայնելու առանձին հարկատեսակների հարկման բազաները և բարձրացնելու հարկման արդյունավետությունը:

Առաջարկել է նոր մոտեցումներ բյուջետային միջոցների ծախսման արդյունավետության բարձրացման ուղիների վերա-

դեցություն ունեցող հարկային և մաքսային մարմինների գործունեության զարգացման հիմնախնդիրները, հարկային վարչարարության բարելավման տեսական և մեթոդաբանական մոտեցումները, տարածաշրջանային ինտեգրման ազդեցությունը հարկային և մաքսային համակարգերի վրա, միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային և մաքսային ծառայողի վարվելակերպի արմատական վերափոխման հնարավոր ուղիները: Նրա կողմից միջազգային

բերյալ, որոնք կիրառական նշանակություն կարող են ունենալ հանրապետությունում իրականացվող հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման բնագավառում:

Նա գտնում էր, որ կարելի է մինչև 30 տոկոսի հասցնել հարկեր / ՆԱ տոկոսային հարաբերակցության ցուցանիշը և այն դիտարկել որպես մակրոտնտեսական ցուցանիշ, հրաժարվել հարկային օրենսդրությունում հաճախակի ու մասնակի փոփոխություններ կատարելու պրակտիկայից և առաջարկել է այնպիսի, որոնք կնպաստեն.

- անուղղակի և ուղղակի հարկերի հարաբերակցության փոփոխմանը՝ հօգուտ երկրորդի, քանի որ անուղղակի հարկերը ներառվում են ապրանքների ու ծառայությունների գների մեջ՝ հարկային բեռը տեղափոխելով սպառողների վրա,

- պրոգրեսիվ հարկման մոտեցումների գործնականում կիրառմանը, մոտեցումներ, որոնք կիրառվում են զարգացած երկրներում.

- միասնական հարկի ձևավորման ու գործնականում կիրառման ճիշտ մոտեցումներ արմատավորելուն, բայց ոչ այնպես, ինչպես կատարվել է «պարզեցված հարկի» և հաստատագրված վճարների պարագայում, որոնք չեն բխում հարկման արտերկրյա փորձից ու հարկման տեսություններից.

- հարկային բեռի ինչպես արդարացի, այնպես էլ համաչափ բաշխմանը: Վերջինս ենթադրում է օրենքի առաջ հարկատուների հավասարության սկզբունքի ֆիսկալային կենսագործում: Ընդ որում հարկային բեռի բաշխման հիմքում ֆիզիկական անձանց պարագայում անհրաժեշտ է դնել ընտանիքի անդամների, իսկ իրավաբանական անձանց պարագայում՝ վերջիններիս համախառն եկամուտը:

Նրա կողմից վերլուծության են ենթարկվել ՓՄՁ-ների դասակարգման ցուցանիշները, ներկայացվել են մոտեցումներ դրանց վերանայման ուղիների վերաբերյալ, ինչպես նաև արվել են առաջարկություններ ՓՄՁ-ների գործունեությունը խթանող հարկային և վարկային խթանների վերաբերյալ:

Ուսումնասիրել է տնտեսության առաջընթացի ապահովման գործում վճռորոշ ազ-

փորձի ուսումնասիրությամբ բացահայտվել են հարկային և մաքսային մարմինների գործունեության կատարելագործման օպտիմալ ուղիները՝ շեշտադրելով նաև կազմակերպական կառուցվածքի օպտիմալացումը և հարկային ու մաքսային ծառայողի վարվելակերպի կանոնների բարելավումը:

Ինստիտուտի հետազոտությունների հիման վրա պարբերաբար փոփոխություններ են կատարվել ՀՀ տարբեր օրենքներում, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների զարգացման հայեցակարգերում: Ինստիտուտը պարբերաբար հրապարակում է կատարված վերլուծությունների արդյունքները, որոնք մասնավորապես ներառում են տնտեսության թիրախային ոլորտների հիմնախնդիրների լուծմանն ուղղված կիրառական առաջարկություններ:

Ինստիտուտն ակտիվորեն համագործակցել է ՀՀ կառավարության հետ, վերջինիս կիրառական առաջարկություններ ներկայացնելու մասով, որոնց մի մասի հաշվառման արդյունքում ուժը կորցրած է ճանաչվել հարկային երկու օրենք, իսկ մի մասը հաշվի է առնվել ՀՀ կառավարության ենթաօրենսդրական ակտերում:

Վերջին երկու տարիներին հրատարակվել են աշխատություններ՝ ակնկալելով, որ դրանցում կիրառված գործիքակազմերը և հիմնուղիները օգտակար և ուսանելի կարող են լինել Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանությունների համար:

Ընդհանուր առմամբ այդ տարիներին ինստիտուտը հրատարակել է 2000-ից ավելի գիտական հոդվածներ, այդ թվում՝ 1000-ից ավելին՝ արտասահմանյան գրախոսվող հանդեսներում, և 200-ից ավելի գրքեր:

ՀՀ գիտական հանրությունը խոր կսկիծով սգում է Վլադիմիր Հարությունյանի անժամանակ մահը և վշտակցում նրա հարազատներին և մտերիներին:

ՀՀ ԳԱՄ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք

ՀՀ ԳԱՄ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԵԳԵԼԱՆՔԸ

Հինգ տարի առաջ՝ դեկտեմբերի 19-ին, ահաբեկչության զոհ դարձավ Թուրքիայում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Կառլովը:

Ջարմանալի զուգահեռությամբ ռուս դեսպանի սպանության մասին լուրը ՌԴ մախազահ Պուտինին զեկուցվեց այն պահին, երբ նա պատրաստվում էր մասնակցելու մոսկովյան թատրոններից մեկում ցուցադրվող «Խելքից պատուհաս» ներկայացման պրեմիերային: Իսկ «Խելքից պատուհաս»-ի հեղինակը սրանից 192 տարի առաջ Թեհրանում դաժանաբար սպանված ռուս դեսպանորդ Ալեքսանդր Գրիբոյեդովն էր:



Ալեքսանդր
Գրիբոյեդով

Ահաբեկչության զոհ դարձած երկու դեսպանների վերջին լսածը եղել է «Ալլահ Աքբար» վանկարկումը:

Հայազգի Մարիա Ալեքսանդրովնայի որդի Անդրեյ Կառլովին սպանել է 22-ամյա թուրք ոստիկան Մևլուդ Մերթ Ալթինթաշը, որը «Ռուսաստանը թուրքերի աչքերով» խորագիրը կրող ցուցահանդեսի բացման ժամանակ իր նենգ մտադրությունն իրականացնելուց հետո ասել է՝ «Մի՛ մոռացե՛ք Հալեպը, մի՛ մոռացե՛ք Սիրիան», ու արաբերենով բանաստեղծություն է արտասանել, որի մոտավոր բովանդակությունն է՝ «Մենք համուն ջիհադի՝ հպատակության երդում ենք տվել Մուհամմեդ մարգարեին»:

Հավելենք նաև, որ Թեհրանում Գրիբայեդովի սպանությունն էլ իրականացվել է այաթոլլահ Միրզա Մասիհ



Անդրեյ
Կառլով

Թեհրանի ջիհադական ֆեթուայով:

Պատմական փաստերը վկայում են, որ բարձրաստիճան պարսիկ հոգևորականն անգիջում պայքար էր սկսել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում հաղթանակած ռուսական կայսրության բանագնաց Գրիբոյեդովի դեմ, որ Թեհրան էր այցելել Ռուսաստանի հաղթանակն ամրագրած Թուրքմենչայի պայմանագրի՝ իր իսկ ջանքերով հավելագրված 13-րդ կետի կատարման ընթացքն ապահովելու նպատակով: Իսկ փաստաթղթի 13-րդ կետի համաձայն, պատերազմին մասնակցած կողմերը չորս ամիսների ընթացքում պետք է ազատ արձակեին թե՛ տվյալ պատերազմի և թե՛ նախորդ պատերազմների ժամանակ երկու կողմերից գերեվարված հայերին ու վրացիներին:

Ջուզադիպությամբ, երբ դեկտեմբերի 19-ին Ռուսաստանի ԱԳՆ-ում ոգեկոչում էին հինգ տարի առաջ Անկարայում սպանված հայազգի Մարիա Ալեքսանդրովնայի որդուն՝ դեսպան Անդրեյ Կառլովի հիշատակը, ՀՀ ԱԳՆ-ում պատրաստվում էին հայտարարել Հայաստան-Թուրքիա երկխոսության գործընթացում Հայաստանի հատուկ բանագնացի անունը:

Գրիգոր ԱՌԱՔԵԼՅԱՆ
Իրանագետ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի՝ կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտակազմակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
 2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
 3. Լուսանկար
 4. Ինքնակենսագրություն
 5. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը
 6. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը
 7. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
 8. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ
 9. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
 10. Տեղեկանք մշտական բնակության վայրից
 11. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)
 12. Կազմակերպության զարգացման ծրագիր
 13. Անձնագրի և սոց. քարտի պատճենները
- Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) ներկայացնել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24, հեռ. 52-13-62:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի գիտաշխատողի և կրտսեր գիտաշխատողի թափուր տեղերի համար

ՀՀ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ

1. Գիտաշխատողի - 1 տեղ
 2. Կրտսեր գիտաշխատողի - 2 տեղ
- թափուր տեղերի համար:
- Գիտաշխատողն անհրաժեշտ է՝ մասնագիտությամբ լինի կենսաբանական և ունենա լաբորատորիայում առկա սարքավորումների վրա աշխատելու հմտություններ: Առավելությունը կտրվի գիտական աստիճան ունեցող մասնագետներին:
- Կրտսեր գիտաշխատողներից մեկն անհրաժեշտ է՝ մասնագիտությամբ լինի դեղաբանական, մյուսը՝ հյուսվածքային մշակույթի մասնագետ:
- Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
- բ) լուսանկար,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը (դրա առկայության դեպքում),
- է) CV,
- ը) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
- թ) տեղեկանք մշտական բնակության վայրից,

ծ) հրատարակված աշխատանքների ցանկ (դրա առկայության դեպքում),

ի) բնութագիր վերջին աշխատավայրից:

Մրցույթին մասնակցության համար պահանջվող փաստաթղթերը ներկայացնել ինստիտուտի տնօրենություն՝ հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում:

Փաստաթղթերը ներկայացնել աշխատանքային օրերին, ժամը 10:00-16:00:

Հասցե՝ ք. Երևան, 0082, Նորագյուղ 108
Հեռախոսահամար՝ (+374 10) 565162, (+374 10) 56-30-15

Էլ. փոստ՝ hydropinstitute@gmail.com

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ պաշտոնների համար

1. Կենդանաբանության ինստիտուտի ղեկավար
 2. Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ղեկավար
- Կենդանաբանության ինստիտուտ**
1. Ողնաշարավոր կենդանիների կենդանաբանության լաբորատորիայի վարիչ
 2. Միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի վարիչ
 3. Փորձարարական կենդանաբանության լաբորատորիայի վարիչ
 4. Մոլեկուլային մակաբուծաբանության լաբորատորիայի վարիչ
 5. Կենդանաբանության թանգարանի վարիչ
- Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ**
1. Հիդրոէկոլոգիայի բաժնի վարիչ
 2. Ջրակենսաբանության բաժնի վարիչ
 3. Ձկնաբանության բաժնի վարիչ
 4. Կիրառական հիդրոէկոլոգիայի լաբորատորիայի վարիչ

Հայտարարված պաշտոնները զբաղեցնելու համար դիմորդը պարտադիր պետք է ունենա համապատասխան մասնագիտությամբ գիտական աստիճան, գիտական գործունեությունը ղեկավարելու և գիտական կադրեր պատրաստելու հմտություններ և փորձառություն:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում կազմակերպության տնօրենի անունով
2. Անձնագրի պատճենը
3. Բարձրագույն կրթության, համապատասխան մասնագիտությամբ գիտական աստիճանի դիպլոմի և կոչման վկայագրերի պատճեններ
4. Հրատարակված գիտական աշխատությունների ցուցակ (հոդվածներ, գրքեր, մենագրություններ, ուսումնական ձեռնարկներ)
5. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ /լուսանկարով/
6. Ինքնակենսագրություն (CV)
7. Բնութագիր աշխատավայրից
8. Տեղեկություններ (հաշվետվություն) 2017-2022 թթ. գիտակազմակերպական գործունեության վերաբերյալ
9. Տվյալ բնագավառի ստորաբաժանումը ղեկավարելու և զարգացնելու տեսլական:

Անհրաժեշտ փաստաթղթերը հայտարարության օրվանից 30 օրվա ընթացքում պետք է ներկայացնել 0014, Երևան, Պարույր Սևակի 7, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն ՊՈԱԿ հասցեով: Տեղեկությունների համար դիմել Կենտրոնի գիտաբարտուղար Հ.Գ. Խաչատրյանին (+374) 10 28-16-01, 091 36-92-92 հեռախոսահամարներով:

Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱՐԻԵԼՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 22.03.2022 թ.:

"ГИТУТЮН" ("Найка") газета НАН РА